ՀԱՅԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի բաժնի վարիչ, տ.գ.թ.

ԻՆՏԵՐՆԵՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Տեղեկատվական հասարակության վերաբերյալ առաջին գիտական հիշատակումները վերագրվում են անցած դարի 60-ական թվականներին, սակայն վերջին տարիներին այս երևույթի վերաբերյալ քննարկումները հատկապես լայն թափ են ստացել: Ինչպես նշում է Ա. Քինգը. «...տեղեկատվական հասարակությունը ոչ թե սոսկ մեխանիկական տեխնոլոգիաների զարգացման այլ, գիտական, տեխնոլոգիական, տնտեսական և մշակութային ներուժի համագործակցության արդյունք է»[1]: Տեղեկատվական հասարակության մեկ այլ գաղափարախոս Թոֆլերի կարծիքով մարդկությունը անցել է պատմության երեք փուլ՝ գյուղատնտեսական, արդյունաբերական և տեղեկատվական[2]: Նպատակ չունենալով անդրադառնալ տեղեկատվական հասարակության առանձնահատկություններին, դրա ընձեռած նոր հնարավորություններին, դրանում մարդու ունեցած տեղին և դերին, տեխնիկական առանձնահատկություններին, նշենք, որ առանց ինտերնետ տեխնոլոգիաների համընդհանուր ներդրման, առանց հասարակական կյանքի բոլոր ոլորտներում դրա ակտիվ կիրառության անհնար է պատկերացնել ժամանակակից տեղեկատվական հասարակություն, քանզի ինտերնետ ցանցը և ինտերնետի միջոցով մատուցվող ծառայությունները մարդկության ստեղծած ամենամատչելի, բարձր արդյունավետությամբ օժտված տեղեկատվության փոխանակման դեռևս ամենակատարյալ միջոցն են:

Տեղեկատվական հասարակության ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ նորովի է մեկնաբանվում տեղեկատվության կարևորությունը՝ ներկայացնելով այն որպես հասարակության հիմնարար արժեք: Սակայն դա չի նշանակում, որ տեղեկատվությունը հասարակական նոր երևույթ է: Ընդհակառակը, մշակութային բոլոր առանցքային հեղաշրջումները կապված են տեղեկատվական փոփոխությունների հետ՝ լեզու, գիր, տպագրություն, կապի միջոցներ, համակարգիչ և այլն: Բայց, ի տարբերություն պատմական անցյալի, ներկայումս տեղեկատվության դերն ավելի հիմնարար է և կիրառվում է կյանքի բոլոր բնագավառներում: Տեղեկատվությունը մեծ դեր ունի մարդու կյանքում՝ կենցաղում, արտադրության մեջ, սպասարկման ոլորտում, քաղաքական հարաբերություններում, կրթության և գիտության ոլորտներում: Ներկայումս տեղեկատվության ոլորտին են վերագրվում կրթությունը, գրադարանային գործը, գիտական հետազոտությունները և մշակումները, զանգվածային տեղեկատվության միջոցները, տեխնիկական միջոցների արտադրությունը, տեղեկատվություն ստանալու, պահպանելու և վերամշակելու սարքերի, նրանց կրիչների և կապի միջոցների արտադրությունը, տպագրական գործը, թատրոնը, կինոն, գովազդը, ֆինանսական ծառայությունները, պետական կառավարումը և այլն[3]: Տեղեկատվությունն իր շարժունության շնորհիվ ներհատուկ է արագ և հեշտ զանգվածային դառնալու հատկությունը: Այն ունի ամենուր թափանցելու հատկություն: Ակնհայտ է, որ տեղեկատվության հենց այդ հատկանիշն է ինտեգրման և գլոբալացման ներկայիս գործընթացների շարժիչ ուժերից մեկը:

Ժամանակակից հասարակության բնականոն կյանքն անհնար է պատկերացնել առանց տեղեկատվական բարձր կազմակերպվածության: Ներկայումս գործընթացները հանգեցրել են նրան, որ տեղի է ունենում հասարակության ինտելեկտուալացում, ավելանում է տեղեկատվության, գիտելիքի արտադրության մասնակիցների թիվը, աննախադեպ տեմպերով աճում է տեղեկատվության ծավալը: Հաշվարկված է, որ նյութական արտադրության ծավալի կրկնապատկման համար անհրաժեշտ է այն ապահովող տեղեկատվության քառակի մեծացում: Ընդ որում գոյություն ունեցող գիտելիքի մի մասի ճշմարտացիությունը դարերի ընթացքում չի փոփոխվում, այն դեպքում, երբ գիտելիքի մի զգալի մասը ժամանակի ընթացքում կորցնում է

---

[1] King A., The Coming Information Society, 1984, p.1.
[2] Тоффлер О., Третья волна, Москва 1999, стр. 9.
[3] Махлуп Ф., Производство и распределение знаний в США., Москва. Прогресс. 1966.

իր արդիականությունը: Տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս արագորեն փոխել արդիականությունը կորցրած գիտելիքի ծավալը: Եթե նախկինում գիտության նոր ձեռքբերումները տպագիր դասագրքերում ամրագրելու համար որոշակի ժամանակ և զգալի ֆինանսական միջոցներ էին պահանջվում, ապա էլեկտրոնային դասագրքերը կարելի է հեշտությամբ և առանց ֆինանսական մեծ միջոցների վերափոխել՝ ներառելով նորագույն ձեռքբերումները: Տպագիր մշակույթը ավելի դանդաղ է փոխվում, քան էլեկտրոնայինը: Մշակույթը դառնում է ինտերակտիվ, ինչը մարդուց պահանջում է արժեքների ձևավորման և վերափոխման գործընթացին ակտիվ մասնակցություն:

Տեղեկատվական հասարակությունը զարգացման նոր հեռանկարներ է բացում մարդու համար: Նախ, տեղեկատվությունը, ի տարբերություն բնական պաշարների, անսպառ է և մարդը այն օգտագործելու, մշակելու անսահման հնարավորություններ ունի: Միաժամանակ, տեղեկատվական հասարակությունը նոր պահանջներ է դնում մարդկության առջև: Ժամանակակից մարդու համար կարևորվում է անընդհատ սովորելու ընդունակությունը, քանի որ արագընթաց փոփոխությունները ենթադրում են տեղեկատվության և գիտելիքի զգալի ծավալի պարբերական վերանայում:

Տեղեկատվական հասարակարգում մարդու շփման դաշտը զգալիորեն ընդլայնվում է, ինչի արդյունքում հաղորդակցման կարողությունները զարգացնելու անհրաժեշտություն է առաջանում: Եթե ավելի վաղ շրջաններում մարդը գերազանցապես հաղորդակցվում էր անմիջական շրջապատի մարդկանց հետ, ապա տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ հաղորդակցման նոր միջավայրեր են ստեղծվել (ինտերնետ, էլեկտրոնային փոստ, հեռահար կրթություն, Web-կոնֆերանսներ), որոնք մարդուց պահանջում են լուրջ պատրաստվածություն: Հաղորդակցման հնարավորությունների ընդլայնումը ունի նաև հումանիստական դրսևորում: Կյանքի ավելի նպաստավոր պայմաններում են հայտնվում հաշմանդամները և սահմանափակ հնարավորություններով մարդիկ: Տեղեկատվական տեխնոլոգիաների շնորհիվ տեղաշարժվելու սահմանափակ հնարավորություններ ունեցող մարդիկ կրթության, հաղորդակցման իրական հնարավորություններ են ստանում:

Տեղեկատվական հասարակությունը գոյատևում է տեղեկատվական միջավայրում: Տեղեկատվական միջավայրը մարդկային քաղաքակրթության զարգացման նոր փուլ է, որը բնութագրվում է բարձր տեխնոլոգիական միջոցներով հաղորդակցության գործընթացների բարձր արագությամբ: Ինտերնետ տեխնոլոգիաների տարածումը հետզհետե վերածվում է այն հիմնական գործոններից մեկը, որը նպաստում է հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման, ինտերնետ խմբակների ձևավորման, ինտերնետի միջոցով տրամադրվող ծառայությունների զարգացմանը, և ոչ ավանդական գործելակերպի տեսակների ի հայտ գալուն (հակերային դրսևորման տարբեր ձևեր և այլն): Ինտերնետ ցանցը այն միջոցն է, որը բազմակի մեծացնում է հաղորդակցության հնարավորությունները և իրականացման արագությունը և լուծում է տեղեկատվական միջավայրի հիմնական խնդիրները՝ տեղեկատվության վերարտադրման, մշակման, փոխանցման և պահպանման խնդիրը: Ինտերնետ ցանցը իրականացնում է մարդկային ինտեգրացիայի գործառույթ, որը տանում է անհատների և սոցիալական խմբերի փոխհարաբերությունների այնպիսի փոփոխության, որի դեպքում դրանց միջնորդավորված հարաբերությունները իրականացվում են Ինտերնետ ցանցի միջոցով:

Ընդհանուր բնորոշմամբ, ինտերնետ միջավայրը տեխնիկական, ֆունկցիոնալ, տեղեկատվական, սոցիալական, տնտեսական, իրավաբանական բաղադրիչների ամբողջականություն է, որոնք ապահովում են անհատական և խմբակային օգտագործողների գործունեությունը: Տեխնիկական մակարդակը ներառում է հեռուստահաղորդակցման ենթակառուցվածքները՝ սերվերներ, համակարգիչներ, մոդեմներ, կապուղիներ, ցանցերի կառուցման տեխնոլոգիաներ և այլ կապի միջոցներ: Ֆունկցիոնալ մակարդակը հաճախորդների համակարգիչների, սերվերների ծրագրային ապահովումն է: Տեղեկատվական մակարդակը բացահայտում է տեղեկատվության հագեցվածությունը, փոխանցվող, տրամադրվող տեղեկատվությունների էական լրացումները ինտերնետում: Սոցիալական մակարդակը իրենից ներկայացնում է սոցիալական բաղադրիչներ՝ ինտերնետ լսարան, ինտերնետ-խմբակներ (միություններ) և ինտերնետ ցանցի սոցիալական առանձնահատկություններ: Տնտեսական մակարդակը ներառում է վճարային համակարգերը, առևտրի համար նախատեսված տարածք-

ները, աճուրդները, բաներային ցանցերը և այլն: Իրավաբանական մակարդակը ինտերնետ ցանցի գործունեության համար ստեղծում է իրավական հիմքեր, ցանցային էթիկայի նորմեր և այլն՝ կանոնակարգելով անհատական և խմբակային օգտագործողների գործունեությունը:

Ժամանակակից տեղեկատվական հասարակությունում ինտերնետի միջոցով մատուցվում են բազմաթիվ ծառայություններ: Այն միավորում է բիզնես գործառնությունների լայն բնագավառ, այդ թվում՝

- տեղեկատվության մեխանիկական փոխանակում,
- բիզնես շփումների իրականացում, օրինակ՝ պոտենցիալ պատվիրատուների և մատակարարների միջև,
- նախավաճառքային և ետվաճառքային սպասարկում, օրինակ՝ ապրանքների և ծառայությունների, փաստաթղթավորման, պատվիրատուների հարցերին պատասխանների մասին մանրամասն տեղեկատվության տրամադրում,
- ապրանքների վաճառք և ծառայությունների տրամադրում,
- էլեկտրոնային վճարում, այդ թվում էլեկտրոնային, ինտերնետային վճարային համակարգերի օգտագործմամբ,
- ապրանքների մատակարարում, ներառյալ ինչպես այդ գործընթացի կառավարումը և նրա հետևումը նյութական բնույթ ունեցող ապրանքների համար, այնպես նաև էլեկտրոնային ձևով մատակարարվող ապրանքների տեղ հասցնելը,
- վիրտուալ ձեռնարկությունների կազմակերպման հնարավորություն,
- բիզնես գործընթացների իրականացում, որոնք համատեղ կառավարվում են ընկերության և նրա առևտրային գործընկերների կողմից և այլն:

Ձեռնարկատիրության նշված դրսևորումներն առանձնանում են բարձր տնտեսական արդյունավետությամբ, այդ պատճառով լայնորեն ընդլայնվում են ոչ միայն դրանց մատուցման մասշտաբները, այլև նորանոր ոլորտներում ինտերնետի կիրառության բնագավառները: Հայաստանը պետք է քաջ գիտակցի, որ շատ թանկ կվճարի, եթե հետ մնա այս զարգացման գործընթացից: Առանց արագ և հաջող բարեփոխման, Հայաստանի զարգացող տնտեսությունը կկասեցվի շատ հարցերում. տեղական արտադրանքը կարող է լինել պակաս մրցունակ միջազգային շուկայում, արտադրողները կարող են կորցնել շուկայի իրենց մասնաբաժինները այն պարզ պատճառով, որ անընդունակ կլինեն մուտք գործել համաշխարհային առևտրի ցանցեր և հավասար պայմաններով մրցակցել: